

պագունի, կ'ըլլայ երկրպագիւ. ձեռն արկաւնի, ձեռնարկի, եւն. այսպէս յոդ կամ յոդի արկանէն ալ՝ ուղարկի, եւ ոչ թէ յոդարկի:

Իսկ Ռոյիլը երկու դատով է, որով կ'ըսենք ուղղորթիւն, ուղղակի, ուղիւ, ուղղորդ, ուղղաբարոյ, ուղղագիծ, ուղղագրութիւն, ուղղագրոծ, ուղղադատ, եւն, եւն:

Ունինք նաեւ ուղեղ կամ ուղիղ բառն ալ, որ ըսել է ղղեղ. հոս ալ կրկին դատ ըլլալուն, Եղնիկ կ'ըսէ. «Յուղղոյն սնանալով՝ եւ ի մտաց իսկ անկանի մարդ»: Երբ վերնատունը դատարկի՝ մարդ խնըն ալ կը կորսնցնէ: Ունինք նոյնպէս շողիղ բառը, որմէ՛ շողղակեր: «Ոչ շաղղով եւ արեամբ ուռուցեալ յառնեն մարմինըն», (Եղնիկ), եւն:

Ուստի մի՛ ընէք այդպիսի յախնձոր սխալ, որ կրնայ նոյն իսկ անհոգութեան ծնունդ ըլլալ. զի շատ անգամ զբարբար գիտողներն ալ կ'ընեն նմանօրինակ կոթով սխալներ: Եւ արդ հարկ իսկ մնաց ըսելու թէ՛

Մի՛ զրէք


ՈՒՂԱԵՑՈՑՑ

Այլ զրեցէք

ՈՒՂԵՑՈՑՑ

(Շարունակելի)

Հ. Ա. ՂԱՅԻՆՅԱՆ



ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐՈՒ ՎՐԱՅ

(ԺԶ. ԺԼ. ԺԼ և ԺԺ Գ-ր. Կ. Պ-լի-)

(Շար. տես թագմ. 1929, էջ 149)

Ձ.

(ԺԹ դար 1800-1865)

- 36. Զոր աշխարհ ո՛չ կալաւ
ո՛չ Բարէլ ընդ Արեաց.
դարձուցին ողջնդամ
եւ ետուն հայրենեաց:
- ԶԱնտոնի Սամանեան
ըզկրտսերն յուստերաց.
ըզՅովսէփ վախճանեալ
այս տապան ամփոփեաց:
- Ամաց ԵՄ Ի հոկտ. 22 1821

36. Թաւլենց յազնէ ի Սիւրասեան Ազուլեցոյ գարճ յարգանան Յովակիմ՝ աչերճ ազնիւ աղան շահագաւ ի Տէր յայս դամբարան

Վարդ զեղեցկափայլ՝ յարմատոյ բարեաց. ի ցեղէ մեծար՝ ազգաւ վեհազանց: Քսան եւ հոգից՝ մինչ ճնաս կենաց. Գերագանց արդեամբ զկեանսն կիցեաց: Իշխանացեալ էր՝ ցանկալին բազմաց. Խնդութեամբ լցան՝ շատք ի լսողաց: Սակայն վան շուք՝ օրհասին դիպում. Զեթող հասանել՝ աւուրց հարսանեաց: Որչափ ցաւազին՝ կական ողբ եւ լաց. Մատոց ընտանեաց՝ արար սեւազգեաց. Արդ ինդրէ՛ ասել՝ ի հանդիպողաց շրգույն ողորմի՛ սոլորմած Աստուած:

յամի Տեսան 1821 դեկ. 5:

37. Հրաւէր երկնառաք կոչեաց զայս տիկին՝. Անցանի յայս վայր մթին խաւարին: Յարկ երկնածընաց օթարան վերջին. Բամից հիւրընկալ վեհին եւ ուամիկին: Մարեամ խոհական դուստր էր Պետրի ծին. ի Պոստոս ծնեալ պանդուխտ ի Պոլսիս: Նոյն միշտ բարեպաշտ՝ քաղցր ամենտեսին. Առ սէր զաւակաց զործող հրաշալին. Սա կին մեծանուն բժիշկ Մանուկին. Ունակ պանծանօք հօթնեակ զաւակին: Բախացեալ զարմիւք թոռամբք բնակին. Դիւցանական մայր եղև բոլորին:

1. Այս սազանագիրին սուգերուն սկզբնատեսերը կը կազմեն ճեանեալ բառերը. «Ճար Մինաս որցի քոյ՛» շարք Մինաս Բժշկեան, Տրագիկոնցի ծնեալ 1777 հոկտեմբեր 15. Վախճանեալ 1851, Երկարտարութիւնները, ճեանարան Գիտելեաց. Վարժութիւն Մանկաց. Հմտութիւն Մանկաց. Քերականութիւն Բազմալեզուեան. Քերականութիւն Հայ-Ռուս. Սրբազան Պատմութիւն եւ Վարք Քահանայապետաց. Ճնասպարհորդութիւն ի Լեւոստան. Յայտնութիւն Աստուածգիտութեան. Նկարագիր վարաց երեւելի արանց եայլն (Միւթթար. Վեհեթիկ 1901 էջ 220):

«... ԺԼ զարուն սկզբըը, քանի՛ ժը թատերական փորձեր տեղի կ'ունենան Պոլսի մասնաւոր շրջանակներու մէջ: Առաջին նախաձեռնարկը Միւթթարեան ժըն է. Հ. Մինաս Բժշկեան Տրագիկոնցի. 1815էն 1817 Պոլսի մեալով Տեղեկանց սպարտեցին մէջ, աշխարհըտար լեզուով թարգմարդութիւններ եւ կատակերգութիւններ թարգմանօրէն յօրինուած ներկայացնել կու տայ»:

(Միւթթի Պէլեկիթաշեանի կեանքն ու Գարժը. Արշակ Զօպանեանէ, Փարիզ 1907 էջ 86):

Իսկուհւոյն պատկեր ժրագլուխ դու մայր.
 Գոյշ բարուն որդւոյ, պարծանք բարեփառ:
 Ուղերձս սիրալիք ընկալ մայրաբար.
 Յաւէտ ընդ այնչափ արդեանցդ անհամար:
 յամի Տեանն 1820 և մերուս ՌՄԿԹին
 ի 20 յուլիս ամաց 76:

Տապան

Սրբուհի Տիկնոջ Ամուսնոյ
 Սարբաֆ Յարութիւն Մկրտիչ
 Աղայի Կէտայան Ապուշեխցոյ.

38. Աւաղ փտաց, աւաղ կենաց դիրեղծական
 յորում և ես իմ տարբանաց չեղէ ժաման:
 Մինչ հրճուէի կրկին դոսերի իմ սիրական
 և որդեակն իմ էր սփոփանքս ի թախծու-
 թեան:
 Իմ բաղդագիր ի յայլ վայելս զուարճու-
 թեան:
 ո՛չ էթող ինձ լիով յագիլ աուրս երկայն:
 Երկարատե և սպառիչ ախտ ծիրական,
 և մշտտանջ վշտալից կիրք կենցաղական:
 Ածի մուծիս երեսնամեան զիս յայս դամբան:
 զի եղեն ինձ նեղ և անձուկ աշխարհք համայն:
 յամի Տեանն 1822:
 Հնետեալը տիպար հայ տանտիկեոջ մը
 տապունաքայն և:

Տապան

Թարթեփշայ տիկնոջ՝ կողակցի
 Ապուսւլանեան Ստեփանի:

39. Բնութեամբ հլու, գործոց մտադիր.
 Չեքք աշխատասէր. վաստակ անձանձիր.
 Սիրոզ լուսթեան և առանձնութեան.
 Միայն փութաշան իւր տանտեսչութեան:
 Մայր որդւովք բերկրեալ տասնեակ զաւակօք.
 Որպէս ժրագլուխ պնենալ պակօք:
 Ի վերջ իւր կենաց վարակեալ ցաւովք.
 Անկեալ ի մահնի անշարժ անդամօք:
 Եռամայ տանջեալ բայց միշտ լի ըղձիւք.
 Եմանիլ Յիսուսի պատկիլ վարձիւք:
 Ի հասակի Հե ամաց ՌՄԿԹ 1820:
40. Անձ մշտավառ ջահ լուսափայլուն.
 Երածկեալ ամփոփի, գրուած է մահուն:
 Յերկրէն Բաղիշու ծնունդ հոգսուն.
 Այր առաքինի տոհմի է քաջազուն.
 Յակոբ վարդապետ կոչեալ ի հոգւոյն.
 Մշու սուրբ ուխտին միբբան զգօն:
 Յակոբ բարունին ձեռնադրող սորուն.
 Անպըճել կոչմամբ առաջնորդ նորուն:
 Մին էր ի գրագրաց մեծի Ամրորդւոյն.

- Գրոց զիտութեան ներհուն բունիբուն:
 Եկեալ ի Պլուս պաշտօնիւ սորուն.
 Արար սուրբ ուխտին փոխանորդութիւն:
 Էր սա հաւատովք ուղիղ և ներհուն.
 Ի յոյս աներկբայ ի սէր հաստատուն:
 Եկաց յաշխարհի զամս եօթնասուն.
 Փոխեցաւ առ Տէր յոյս ամենեցուն:
 յամի Տեանն 1825 հոկտեմբերի 12:
41. Բարձէք եղբրդուք, ողբագին կական.
 Նստեալ շուրջ զհինս, մերձ յիմ այս տապան:
 Չեզ առիթ լաւոյ՝ եղկիււոյս պայման.
 Գորովոց, մարդկան եղուկ սեսարան:
 Դարձիք, հայիլ յիս, ո՛վ որդիք մարդկան.
 Դարձիք տեսանել զգործ ժանտ մահուան:
 Զբժժակ բեկման կարի դառնագոյն.
 Ինձ մատուակէր իտիստ դահճաց հանգոյն:
 Արկ զհինս ըզբող խոշոր ի հողոյ.
 Փոխան պնեալից սոկեզարդ քողոյ:
 Թախիծ զուժարկուք էլէք ի զուժել,
 Առ իմ խօսեցալ, այր զեղավայել:
 Լեալ նախանձարկուք մահ և զերեզման.
 Տան անդէն ինձ, պարս հարսանեաց պարել:
 Արդ աղաչեցէք առ Տէրն փառաց.
 Խառնել զիս ի դաս ամբիծ կուսանաց:
 յամի Տեանն 1827 օգոստոսի 6:
42. Դու անհանգիստ՝ ափշեալ խորհրդով՝ բերիս
 ի խնդիր
 յառեալ ընդ տեսիլ՝ ահել շինուածոյս ամ-
 լիփոփեալ յայս դիր:
 Զարմանք են մտաց զիմոյ փլատակք ընդ
 լմանու գրաւ:
 զաչս իմ յօշոտեն՝ թողեալ ի ներքոյ ա-
 նուն և համբաւ:
 Անձ այս պատկեր գոր դու տեսանես՝ այդ
 զգիր է մահու:
 փորեալ ի վիմի անդարձ են վճիռք ի սիրտ
 թոյ ազգաւ:
 Թ՛չ կեանք դիցազնոյն՝ վաղ առնու վախ-
 լան զերդ սարդի ոտտայն,
 յաշորդեն նմա՝ փառք յուէրժական՝ զայոց
 յապագայն:
 Զի նրբին օղոց՝ առաձրգական՝ պատուա-
 լբան թնդիւն.
 Կրկնէ զարձագանգս՝ ի խորոջ լսօջ՝ իմուս
 լանկիւոյս:
 Ե՛ս եմ մեծանուն՝ ՄԱՆՈՒԿ կարևեցի՝ Աս-
 տուածատուրեան՝.

1. Աւուսիցբաի Մանուկ Ամբրայ, Այս տապանա-
 բարբ ամենէն խոշորն է եթէ բողոքատենք միաներուն
 հետ: Մանուկ Ամբրայի Քղթակցութիւններէն 300էն
 աւելի իմ քով կը գտնուին:

գործ մեծակառոյց՝ վէմ յիշատակաց իմ է
 [այս տապան,
 Ի մանուկ տիոց՝ կրկին եղև ինձ զրզիռ
 [վաստակոց,
 միտն եղէ ես՝ վահան ի ձեռին՝ ուղիղ հա-
 [ւատոց,
 Ըզվարս սրբոց՝ երջանիկ դատուց երի հա-
 [ռաջի
 Ի ժողով ազգիս՝ հրաւիրեցի՝ զքերանն ոսկի,
 Երկրորդիւ՝ համբաւ՝ ճոխութիւն փառաց՝
 [տաացայ անձին,
 որովք որոզայթք՝ կրկին արտոման՝ զա-
 [ռաջս իմ առին,
 Առաջինն յորդեաց՝ ինձ շաւիղ ուղիղ խո-
 [րան յիրկնանճեմ,
 Իսկ երկրորդն շինող՝ զիմ զայս դամբարան
 [մահու ապաւէն,
 Ախարհ զոր ետ ինձ՝ էառ վերստին՝ զիս կո-
 [ղոպտելով,
 առաքինութիւն՝ մնաց ինձ միայն յարու-
 [թեան յուսով,
 վախճանի ԿՊ ամաց ի 12 ապրիլի 182...

43. Պարսէզ բանաւոր պաղոց բարութեան.
 Հոգեբոյս ծաղկանց ընտիր բուրաստան.
 Տիրացու Գրիգոր խոնարհ քաղցրբան.
 Պարօն Թազէի որդի սիրական:
 Զկեանս աշխարհի համարելա խոտան.
 Կուսական կենաց փափաքի համայն:
 Տեսնոն կարապետ դէտի Բիւզանդեան.
 Լինի աշակերտ առնու աստիճան:
 Սա հոգի բարի ունէր բնական.
 Զոր մարմնոյն յայտնի չքից կերպարան.
 Ի քսան երկու ամին իւր լյման.
 Փոխի հաւատով ի կեանս անվախճան:
 Առ քեզ պաղատի Աստուած զթութեան,
 Արա արժանի քո սուրբ տեսութեան.
 1831 յուլիսի Ա:

44. Փարթաճա հաւատովք քան ընչիւք.
 Յերկրաւորս երկնից սեղանաւոր.
 Մեծանուն Յովսէփ Թընկղու՝
 յաստիս տարագիր.
 Ի վերինն ամրացեալ հայրենիս,
 Ամաց Հ ի 11 ապրիլի 1833.
 Որդիքն երախտագէտք
 ցանկալոյ օրք և քաջ դրաստիարակի
 զարտօտրալից վէմս եղին յիշատակ:

Տապան մահտեսի Շահինի որդի ոսկե-
 լիչ մահտեսի Մարտիրոս աղային:

45. Եկայք և տեսէք զօրն մահարձան.
 Երաներուք թէ մահ կայ միշտ առ էրան:
 Այրըս հոգեւէր աղքատաց պաշտպան.
 Որբոց և այրեաց էր միշտ օգնական:
 Եբբ ի վաթսուն հասակի ըրման.
 Սուգ թողեալ որդոց նմուտ յայս տապան:
 Թէ որ առնէ զանց ներքողոս յիշման.
 Քարինքըս զօրէն ըստ փրկչին խոտտման:
 Հայեաց Տէր Յիսուս, Աժ. բարութեան.
 Տո՛ւր անմահ կենօք ցնձալ յաւիտեան:
 յամի Տեսնոն 1842 օգոս. 22
 Եւ մայր օտրին Մահտեսի Սրբուհին
 Որք հանդիպէք յայսմ շիրմին
 Հայցէք ի Տէրս տալ զղործրին
 1834

46. Իշխան մեծարու Պաղտատար աղայ.
 Ոյր հայրն էր Հոզունեանց Գաբրիէլ ամիրայ.
 Էր ակնավաճառ և մշտօք ճարտար.
 Եկաց բարերար զոլով որբոց հայր:
 Պէշիթիթալու գեղջ որ եկեղեցւոյ.
 Մեծաց և փոքունց նախագահ արզոյ:
 Պայագատ զորդիս եթող ժառանգ իւր.
 Ազգասիրութեան գործոց ի սփիւռ:
 Խնդրէ աղօթից ձեր սրտի ի վառ.
 Յիշատակաց խունկ ձըզէլ ի բուրվառ
 1834

Զմեծկէզէկցի Թաղարու գուղէն Սիրու-
 նի որդի Ակոբ աղային:

47. Մի լեցի երբէք ոք ազգի մարդկան.
 Ի բուրբ բարիս յայս վայրկենական.
 Եւ կամ է կենալս իւր վախճանական
 Անանց կարծեցեալ ի սա ապաստան:
 Զի ամենեքեան դիւրաւ անցանեն,
 Դիւրաւ եղծանին յոչինչ էլանեն:
 Մաղթեսցուք յաւէտ ի բարերարէն.
 Զթողու մեզ զուրկ յիւր տեսութենէն:
 Զի այն է մարդկան մեծ երջանութիւն.
 Բաց ի սքմանէ լիք ինչ բարեգոյն:
 Զանալ պարտի մեզ ըստ կարի մերում.
 Զըզէլ զայն ի ձեռս զործով լաւագոյն:
 Ուրաք ապրեսցիս շունիս դու վախճան.
 Կըլոնահ դու և տես իբրև բանական.
 Ի սակ է առ(ւ)րց յայս խաւար տապան.
 Ունիս մտանել ծանիր անխափան.
 Ահա ելեալ եմ յաշխարհէ աստի.
 Վաթսուն ամեայ աւուրք զայս տպի. մտի:
 Որ յիմոց եղբարց ոք զայս ընթերցցի:
 Աղաչեմ ասել Տէր որդումեսցի:
 յամի տն. 1837.

1. Սարգսի Յովսէփ Թընկղուգաւէ:

Ի Գաւառէն Ակնայ ի գիւղէն Նարզե-
րայ Վարդպետեան հանգուցեալ հացա-
գործ Յօհաննէս ալայ:

48. Մինչ բազմաւորց ակն ունէի,
կենաց առնուլ զըրջան.
Ի գործ պաշտօն հայրենասէր
ցուցանելոյ անգուլ ջան:
- Ընդ հովանեաւ ոստոց իմոց,
զիմ հարազատ ծննդոց.
Կեալ յուսայի հանգստաւէտ,
մինչ ի խորին կեանս ծերոց:
- Անկարծ մահուն անդարձ վճռոյ,
զիս պաշարեաց ծերունիս.
Եւ մեկնեցաւ հոգին անմահ
մարմինս Մնաց ի շիրմիս:
- Արդ ո՛ր անցորդք մահկանացուք,
հանդիպել ձեր յայտ տապան.
Յերկնաւորէն մաղթեմ խնդրել,
վասն իմ՝ որ ինչ ձեզ (ա)րժան:
- յամի Տեառն 1844. յուլիս 14.
49. Փող ազդողական պատգամաց վերին,
Քարոզիլ բանից երկնից արքային.
Սա գիտակ լեզուաց և ուսմանց խորին.
Եւ անխոնջ թարգման ըստ բաւականին.
ՅԱլթուեան տոհմէ արհի Տէր Պետրոս
Առաքելագործ այդ եպիսկոպոս.
Մահաոթ խափու աստի կենցաղոյս,
Չև վաթսեամեայ եղաւ ընդ հողոյս:
Մնայ գալտեան փրկչիդ կենարար,
Անուլ զպսակ խնամօքդ անճառ:
Արդ հովիւդ քաջ, գատաւոր արդար
Տո՛ր սմա հանգչիլ յերկնից քո տաճար:
Յամի Տեառն 1844 սեպտեմբեր 26.

Երբիմ Տագէսեան Պարօն աղայի
ղուտոր Ասանէթ:

50. Արմատոց բարեաց՝ պանծալի զաւակ,
մարմնով կուտակեաց, ողջամիտ տատրակ:
Այն ինչ երեսուն ամաց իւր հասակ:
Չնջեաց տարածամ մահաբեր խորշակ:
Յիտուս իմ լոյս իմ հայնաց յիմ վիճակ,
յոսկիրս իմ ցօղեալ զարեան քո կայլակ:
Մատո՛ զունկն քո, լո՛ր իմ արդակ:
Տեսելամբդ զմայլել յօթներկիեան վտակ:
յամի տեառն 1843.
օգոստ. 9.

Ե
Սերունդ մեծանուն զարմին Տագէսեան:

51. Մեծ հատվածառ Պարոն Ամիրայն,
Ունէր բարեւէր սիրտ ազնուական.
Հեզ և միշտ խոնարհ ի կեանս իւր համայն.
Իօթանասնամեայ բարւօք ծերութեան
Գեղեցիկ մահուամբ ընկաւու վախճան.
Թողեալ պերճաշուք որդիս ընտրական
Բարեյիշատակ յաշորդ տոհմական:
Յամի Տեառն
1849
Յունվարտ
25



ԳԵՌՐԳ ԱՊՏՈՒԼԼԱՆ

Ի Ր ԱՆՏԻՊ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Շար. տես Բազմավէպ, 1928, էջ 161)

Կ'ըսուի թէ ո՛վ որ սիրտ ունի, ամէն
բան ունի. որք՝ այնքան զգեցցիկ կը պատ-
շահի այս զբուցուածքը. բան նոյն ինքն
Գէորգ Ապտուլլահի, որ աշխարհիկ տա-
րագին տակ կը կրէր լուսամիտ և անկեղծ
կրօնականի մը մաքուր և վեհանձն սիրտը:

Ան շատ լաւ իմաստասիրած է մարդ-
կային կեանքը, կը ճանչնայ անոր տկա-
րութիւնները, կարօտութիւնները ինչպէս
նաև վտանգները, որոնց մէջ կ'ապրի գայթ
ի գայթ: Դարուս ազատախոն և արդիա-
կան յոռի վարդապետութիւնները, որ ոչ
նուազ իրենց չարաղէտ ազդեցութիւնը ու-
նեցան մեր ցեղին բազմաթիւ երիտասարդ-
ներուն և նոյն իսկ իրենց կեանքի կէս
դարը բոլորածններուն վրայ, երբեք չկա-
րողացան անոր քիտտոնէական՝ առողջ
սկզբունքներով սնած և զաստիարակուած
հոգին այլայլել:

Իր սրտին խորը կ'արծարծէր նուիրա-
կան հուր մը եռանդեան և սիրոյ առ Աս-
տուած, առ կրօնն և ընկերն. և հաւատաքը՝
որ չի ժպտիր անոնց՝ որոնք տարտամ
և շինծու վարդապետութիւն մը կը հա-
մարին զայն, և որոնց համար, ինչպէս
կ'ըսուի, Աստուած լոկ հարցական կ'էս
մ'է և ոչ այլ ինչ, այդ հաւատաքը՝ իր
կեանքի միակ իտէալը և մշտավառ փա-
րուր եղաւ, որուն միշտ փարած Յնաց
հոգեկին: